



Ա Ս Ա Շ Կ Ա Ն Ց

Թիվ 22

1890

ՍԵՊՏԵՄԲՐԻ 15



ՈՒՂՏՆ ՈՒ ՍԱՊԱՏՈՂՆ

Հարկանելով սրբինց բմբուկ ,
Փարիզի մէջ ըուրց կ'ածեին մարդիկ մի օր
Աւլց մ' հոյակապ , յաղքաբազուկ ,
Որ Թունուզին շիտակ բերուած էր անդ դեռ նոր .

Եւ բիւրաւոր հետաքրիրք ալ անձկագին
Զայն դիտելով արզելք էին անոր անցքին .
Մեծատուն մ' որ մըտերմի տեղ քուէր միայն
Իւր ոտից տակ գերի տեսնել զաւշարհ համայն ,
Սկսաւ զովել ուղտին կեցուածքն հեզ ու խոնարհ .
Իշխան մ' անոր յուրջ դէմքին վրայ կը զարմանաւ .

Մինչ ազան մ' ալ, եռանդագին ,
Աը դրուատէր յաղը կենդանւոյն ժուժկալ հոգին .

Երբ սապատոլ մ' ելաւ ըստ .

— Տեա՛ր, լըսուեցան խօսեր անքաւ .

Բայց մեծագոյն արժանիքն իւր՝ չը յայտնեց մարդ .

Տեսէք իւր բարձր ուսին վերեւ .

Բըլրաձնեւ կուզն այն ժնորհազարդ ,

Այդ բեռան տակ՝ որ՝ բան քերեւ .

Ա'երեւի նա , եւ իւր դէմքն ալ ո՛րքան՝ այնու՝

Մի վեհութիւն եւ ուր կ'առնու»

— Կը նըմանինք սապատոլին՝ զոր կը ծաղրենի .

Զի գրերէ միշտ անոր պէս նիշտ կը վարուինք մենք .

Զի մարդ այլոց զովես , ներբող կարդալով յար ,

Զինքն խակ զովէ անգիտաբար :

Լր Պայէի

Թարգ. ՍՈՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆ

ՅՈՒՍԱՀԱՏԵՍԼ ԾԵՐՈՒԽԻՒ ՄԲ

ՍՍԱՑԱԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆՆ

Գերմանիոյ գաւառներուն մէջ կ'բը-
նակէր սնանկացեալ այլ գժբաղդ ծե-
րունի մը ընտանեօք հանդերձ : Խեզ-
ճուկ կիսաւեր գզեակի մը մէջ , հեռի
աշխարհային ամեն խարութիւններէ և
վայելքներէ , չքաւորութեան լուծին
տակ մատնուած չգիտէր այդ ծերու-
նին այլ եւս իր սեփհական արհետոն
եղող գերձակութեան պաշտօնն շաբու-
նակէլ գէթ օրապահիկ մը հայթայթե-
լու և սնուցանելու համար այն թշուա-
ռացեալ մանուկներն որք պատառ մը

հացի կարօտ լինելով արտասուալից հա-
ստչանքներով կ'կրծէին իրենց սիրոն
ու հոգին :

Հնթերցողին կ'թողում երեակայել
այդ ցաւալի կացութեան մնացորդներն ,
զգայուն սկրտ մը պէտք էր գթալ , բա-
րեալաշտ հոգի մը պէտք էր օգնու-
թեան հասնիլ այդ կարօտելոց , դոյզն
ինչ մալթարելու և կերակրելու հա-
մար :

Ծնողք և զաւակունք անդադար ի-
րենց ուժաթափ բազուկներն դէպ ի
երկին բարձրացուցած , ողոքելի քաղցր
ակնարկներով երկնային բարձր զօրու-
թեան գթութիւնն կ'հայցէին : Դառն ,

արտուրքներ գետին կ'հեղուին այն ցամքած այտերէն . ո'վ յուսահատութիւն , ի՞նչ մեծ պատրանք :

Ութսուն և ինն ծաղկոտ ու ծիծաղկոտ գարուններ թւակոխած էր այն պատկառելի ծերունին և փոխան իւր այնքան փորձառութեան և աշխատութեան անողոք հարուածի մը տուկ ճընշուած , արիւնոտ սիրտ մը կրելու և դժբաղդ ճակատագիրն անիծելու թշշուառ կացութեան մէջ կը գտնուէր :

Հագած էր պատառուն հագուստ մը , մերկ էին իւր ստներ , կ'կոթնէր երկայն գաւազանի մը , ձիւնի նման ըսպիտակ և երկայնաթել մօրուքներն զինքն պատկառելի հանդիսացուցած էին : Խեղճը իւր ծանօթաց և բարեկամաց օգնութեան կ'դիմէր , բայց և ոչ մին իրեն կ'օգնէր , օր մը այլ եւս յուսահատութեան վերջին աստիճանին մատնուած , գրեթէ բոլորովին շուարած , ուրիշ միջոց մը չ'գտներ այլ միայն կ'մտագրէ մօտաւոր անտառ մը երթալ և հոն մտատանջութեան մէջ թաղուելով , պատահական ճամրորդի մը եթէ մի գուցէ հանդիսի , ի յայտանէ իր կացութիւնն և օգնութիւն մը խնդրէ : Ահաւասիկ Բարձրելցն առատ գթութեան ցոյցներէն մին , ահաւասիկ չերմեռանդ աղօթքի մը հատուցումն , պատմենք թէ ի՞նչ պատահեցաւ հոն մեր յարգելի ծերունին .

Երբ անտարին մէկ անկիւնն սգլած միշտ աղօթելով կ'զբաղէր և մտահոգութեամբ կ'առաւապէր , յանկարծ մարդկային ոտից հետքերու տրոփիւններ հազիւ լսելի եղան իւր ծանրացեալ ականջներուն , ուշադիր աչքերն յարեց և ակնասլիշ մնաց պահ մը զարմացեալ . բարեխախտաբար բեռնակիր մը որ իւր յարատե աշխատութեամբ

հազիւ 40 ֆիօրին աւելցուցած էր և զայն քովը կ'կրէր , անցաւ անկից , երբ տեսաւ այս ծերը՝ կարծեց որ գող մ'է , վախինալով որ զինքը չ'սպաննէ , խկոյն իր գրալոնէն հանելով այն փոքրիկ պարին որուն մէջ պահած էր իւր շահած վերոյիշեալ 40 ֆիօրին , յանձննեց անոր . ծերունին զարմացած անոր նայեցաւ և պահ մը անխօս մնաց , ապա ըստ ջերմագին , «Ասուած ձեզ կրկնապատիկ վարձացառոյց լինի եւ երբէք այդ ներկայ կացութենեղ աւելի դժբաղդ վիճակի մը չ'արժանացնէ զիեզ» : Ապա նորա ոտքն իյնալով խնդրեց անորմէ թախանձագին որ երբէք այս իրողութիւնն չ'պատմէ ուրիշի մը և չ'մատնէ զինք կառավարութեան սուտ փաստ մը յառաջ բերելով :

Բեռնակիրը ծերունւոյն խօսքերը լսելով զարմացաւ և ըստա՝ « Ես տեսնելով քու ցաւալի կացութիւնդ խկոյն նշարեցի քու վիշտդ ու տառապանքդ , և փափաքեցայ քու այդ եղիելի վայրկեաններուդ մէջ , իմ սոյն դոյզն նուէրովս թեթեցնել ներկայ վիշտդ ու մըտահոգութիւնդ » :

Ծերը պատասխաննեց ջերմ խոնարհութեամբ , « Կալվաչեմ հաճեցէք գալ իմ ետևէս , սիրելի բարեկամ , երթանք տուն ի միասին և ցոյց տամ ձեզ ընտանեացս և իմ դառն վիճակը : » Բեռնակիրն չ'կարենալով մերժել սոյն բարեսիրտ ծերունւոյն աղաչանքն երկուքն ի միասին մեկնեցան այդ պատմական վայրէն յամրաքայլ :

Այն պահուն երբ դպեակ հասան՝ բեռնակիրն չ'կարողացաւ զալել այն գաւունութիւնն որ կ'զգար իր վրայ և այն վիշտն ու տիսրանքն որ՝ կ'ծաւալէր ի տես այն չորս սիրասուն մանկանց սրոնք անակին ուրմին վրայ նըս-

տած, անօթութենէ գրեթէ նուազած, բոլորովին նիհար ու ուժաթափ էին: Երբ տեսան որ իրենց հայրն սիրելի բարեկամի մը թեակից քիչ շատ խընդումքերես կ'գար, իսկոյն անոր վրայ վազեցին և գոչեցին վշտահար, «Հայր, հայր, անօթի ենք, տուր մեղ գէթպատառ մը հաց, որպէս զի մահէն աղատենք մեր հոգին և կարենանք կրտոր մը յագեցնել մեր ստամոքս:

Ծերտունին քիչ շատ խնդում երես գրկեց զանոնք, ամենքն ալ սիրագին և բեռնակրին հետ միասին տնտկին ներսի սենեակն հրաւիրուեցան:

Հոն առաւել ցաւալի տեսարանի մը հանդիսատես եղան, ծերունւոյն կինն, նուազած գետին ինկած էր, իր քով ուրիշ երկու մանուկներ տախտակամածին վրայ ինկեր էին նօթութենէ տանջուած: Այս ցաւալի տեսարանին վրայ, որ ամենէ անզգայ սիրոն խոկ ի գութկ'չարժի, բնունակիրն ալ չափազանց ցաւելով, աչքերն կ'լեցուին և գտունալով ծերունւոյն կ'ըսէ, «Իրօք ցաւալի է քու կացութիւնդ, ազօթով եմ Աստուծոյ իր բարձր պաշտպանութիւնն անպակաս ընէ, և զձեզ ամենայն փորձանքներէ և պատահարներէ ազատ պահելով գէթ ձեր ամենօրեաց հացն անջնջելի լինի ձեր յարկին ներքեւ, այս խօսքերն ըսելով մեկնեցաւ, բաժանման խորին տպաւորութիւն մը և ցաւակցութիւնն իր հետ կրելով, մոտղրելով նաև գէթ շարաթն անդամ մը իւր չահածէն փոքրիկ նպաստ մը հանել այդ ծերունւոյն: Շատ գոհ մնացած էր 40 ֆիորինն այդ խեղճին տալուն և ուրիշ պարապ բանի մը չ'վատնելուն:

Ահաւասիկ բարեկալաշտութեան և ողորմասիրութեան բարի օրինակ մը, ո-

րու հետեւիլ պարաւառ ենք, ժառանգելու համար երկնային արքայութիւն, մաքուր սիրու մը և գնահատելի յիշաշտառի մը, և այսպէս վասաւորուելով փառաւորուած կ'լինինք նմանապէս մեր նախահայրերն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ՅՈՒՆԱՆԱԿԱՆ Խ. ՇԱՀԱԿՄԵՍՆ

ԶԱՐԱՆԻԱ

ԱՄԱԲՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԷ

Ո՞րքան գեղեցիկ եղանակ մ'է ամսան, արեգակին այրիչ ճառագայթներն արդաստուոր կը գործեն երկիրն որ իւր այլազան արտադրութիւնները կը պարզեէ այնքան առաստութեամբ բազմավաստակ մշակին: Տարւոյն ամենէն հարուստ եղանակն ահա՛ որ ամենուն արամագրութեան ներքեւ կը դնէ իւր վայելքներն ու հրավորյներն:

Ամրան մէջ են գարոցականաց արձակուրդի օրերն. տարեկան աշխատութիւններէ վերջ, քազցր է գեռահասակ մանուկներու համար վարժարանին նուիրական յարկէ գուրս ելնել. դաշտերու մէջ, լերանց վրայ շրջիլ, վայելը բնութեան հրավուրելի տեսարաններն, չնչել արեգակին բարերար ճառագայթներուն ներքեւ դաշտույին մոքուր օդն, թռչնիկներն և թիթեռնիկներն հալածել և մանկական խաղերով պրօսանաց ժամերն անցնել:

Ամրան մէջ կը բացուին բաղանեաց դուներն, ծովեզերեայ գիւղերն ու քաղաքներն աւելի չքեզ երեսյթ մը կ'անուն: Հիւանդու և տկար կազմուածքի տէր մարդիկ բնութենէն կը խնդրեն իրենց մարմնոյն համար առողջութիւն, ծովու ջուրն իւր տարրագիտական բա-

զագրութիւններով եղանակին ջերմ ա-
ւուրց մէջ անհամեմատաբար օդատակար
կը լինի մեզ:

Ամրան մէջ կը զարդարուին պար-
տէղներն և զաշուերն ։ Վարդն ։ շահո-
գրամն ։ յասմիկն ։ մեխակն իւրեանց
բոյրովն կը ընտեն մթնոլորտն ։ իրենց

Ամառը իւր հետ կը բերէ այգեկութն ։
ամրան հրաժեշտի աւուրց մէջ այգե-
կութը կ'ակախ ։ այդիներն կենդանու-
թիւն կ'սամսան ։ որթերուն մէջ բեռ-
նաւորեալ իրենց գեղնորակ ովկոյզնե-
րովն ։ հնձանները կը հաստատուին ։
օրհնեալ պալոյն գէմ ահեղ կոտորածը



ոյլագան գոյներովն ակնախտիլ տեսա-
րան մը կը պարզեն դիտողին ։ աւել-
ցուր ացա վրայ գաշտաց դալտրիքն ։
վարդի ծաղկունքն ։ պտղատու ծառաս-
տաններն ։ իրենց բիւրուոր արտօնդ-
րութիւններովն ։ և կ'անենաս եղանակ
մը այնքան օդատակար աղքատին և հա-
րուստին համար :

կը լինի ։ անոր հեղանիւթը կուտայ
մեզ ըմալելեաց ամենէն ընտիրն մեր
ուրախութեան և վշտի ժամերուն ըն-
կերն :

Ամրան վախճանին մօտ զբօսաշրջիկ-
ներու և որտորդներու խումբեր երեսն
կ'ելնեն ։ առաջինք պայուսակ մ'ունե-
նալով իրրե բովանդակ ինչք ճանապար-

Հորդական ամէն առարկաներով լի , երկրէ յ'երկիր կը շրջին , ամէն ուրեք իրենց դադարն առնլով և բնութեան այլազան տեսարանները վայելելով . վերջինքն հրացան մ'ունին միայն , և անոր անհրաժեշտ առարկայներն . ամէն ուրեք կ'այցելն , կը մագլցին լերանց կողերուն վրայէն կը մտնեն ծառախիտ պուրակներու մէջ և ամէն վտանգ առ ոտն կոխելով՝ իրենց որսական արշաւանքները յառաջ կը մղեն :

Եւ ամառն կուտայ մեզ ցորենի հունձքն , արեգական կիզիչ ճառագայթներն կը դեղնցնեն հասկերն . մշակներու բազմութիւն մը կը դիմէ ցորենի արտերուն մէջ , հոն կը կատարուի քաղը , կալը և ուրիշ խել մը ործողութիւններ , գիւղական կառքերն կը բեռնաւորուին հասկերու խուրձերով և գիւղացւոց խուռն ամբոխը ցնծութեան երգերով կը հետեւի կառաց թաւալման մինչ ի գիւղ : Այդ հասկերէն ցորեանը դուրս պիտի ելնէ ջաղացքին մէջ պիտի մտնէ , և կերպարանափոխութիւններէ վերջ , հաց պիտի լինի , ամենէն տարրական սնունդն :

Ամառ , օրհնեալ լինիս , մաղթե՛նք որ տարիիներու յաւիտենական շրջանին մէջ զուարթ դէմքդ ցցունես մեզ և միշտ գարնան գեղածիծ աղ աւուրք զքեզքերեն և գո՛ւ քո կարգին տաս մեզ ձրմրան ցրտագին օրերն , որոց նաև պէտք ունի մեր մայր բնութիւնն :

Մ . Դ . Մ 0 9 ն ն



ԱՆՁՆԱՆՈՒԻՐ ՏՂԱՆ

Մի կիրակի օր , երբոր գարնան աւելք բարձրացեր էր երկնակամարին վերսոյ , Գագիկ իր գասակիցներով գնաց

ի դաշտ զբօսնելու և զուարձանալու՝ կանխաւ ստանալով մօր հաւանութիւնը : Հոն ըստ բաւականին խաղալէն գկնի , ընկերաց թախանձանքէն զիջանելով , չուեցին մօտակայ գետակին քով , յորում կ'լուզային փոքրիկ տղաներ : Եօթ ութ տարեկան տղեկ մի անխո . հեմութեամբ յառաջացաւ ջրին մէջտեղ և մերձ էր հեղձնուլ , եթէ Գագիկ անվեհէր կերպով առանց զգեսար մերկանալու , չ'ցատկեր ի ջուր և չաղատէր ողորմելի տղեկը : Ընկերները բազում գովեստներ թափեցին իրեն գլխուն՝ քաջարատութեանը և մարդափարութեանը պստամառաւ և հազար ու մէկ շնորհակալութիւն յայտնեցին , որ սեւ օրհասէն զերծ պահեց : « Զ'Է՛ , պէտք է ես ի ձէնջ լինիմ շնորհակալ , պատասխանեց Գագիկ , որովհետև փոքրիկն արև տուող դուք եղաք , եթէ ինձ չ'տիպէիք , ես ամենեին կամք չ'ունէի հոս գալու և թէ միանգամայն նուիրական պարտքս կատարեցի : »

ՄՊՏԵԱԼ ԳՈՂԲ

(Ամենայն հոգւոյ մի՛ հաւատաբ)

Ս . ԳԻՐՔ

Աշնանային երեկոյեան ատեն , երբ Արեգն իւր վերջին ճառագայթները հաւաքելով բնութեան վերայէն , կ'երթար հանգստանալ ի գիրկ մօրն , որպէս զի առաւօտուն նոր եռանդով և նոր աշխուժով օգնէ արարածոց , մի քիչ հեռուն կ'տեսնուի մէկ աղքատ կին , երկայն դոգնոցը կապած թևերը կուրծքին վերայ գրած , ասոր և անոր կ'գիմէ արտասուս յաչս՝ զինքը գիշերային ցրտէն և երկիւղէն ազատ կացուցանելու :

Վերջապէս մի բարեգութ մարդու կ'հանդիպի որ դրանդիին վերայ նըստած ընտանեացը հետ կ'խօսակցի. «ԱՇ, Տէ՛ր իմ, կ'աղաչեմ, Ձեր տան մէջ մի անկիւն չնորհէ այս գիշերուան համար՝ ննջելու. պանդուիստ եմ, այրի՛ եմ, չունիմ աստ ծանօթ՝, Ձե՛զ կ'աստաւինիմ, զերծո՞ զիս ի մահուանէ, զի եթէ բացօդեայ տեղ մնալո՞ւ լինիմ անպատճու ագահ հողոյն ծոցը պիտի լինի իմ վերջին քնարա՞ն » Մարտն ի գութ կ'շարժի, կ'ընդունէ զինք յիւր տուն :

Կեղծ աղքատը մեծ ճարպիկութեամր կ'պատրաստէ ընթրիքն աղջկանց մասնաւոր օժանդակութեամր, այնպէս որ բոլորովին համակրանքը յինքն կ'դրաւէ :

Դիշերը կամաց կամաց առ հստարակ երը կ'ափասպեալէ անհուն տիեզերաց վերայ կ'երթան ննջելի սենեալին, պարտառուն անդամոց և խոնջեալ գործարանաց հանգստաւթիւն պարգեւելու, Մութն ի մութն կ'ցատիէ շուտով աղքատն անկողնէն, կ'զգենու պատառատուն շրբերը, կ'շրջի գաղոտագողի տան մէջ, ոսկեղին և արծաթեղին զարդեր ծոցերն և գրավաններն տեղուորելով՝ կ'հեռանայ :

Արշալյոսին կ'զարթի բարերար անձը, կ'երթայ քովը, աեսնանալու համար թէ արդեօք հանգի՞ստ է : Կ'զարմանայ, երբ զինքը չգտներ անդ, հագուստներուն տեղը կ'նայի, չ'կայ. կ'ըսէ իւրովի թերեւս անխուսափելի պէտքը կ'հոգայ : Յանկարծ աչքին կ'զարնէ բաց սնուուկ մի. կասկածի մէջ կրկրմի. թէ մի գուցէ գող լինէր կինը : Սնտուկը կ'թողու այս վիճակին մէջ և ինքը կ'յառաջանայ գէալ ի գուռ : Դուռը բաց է. կասկածը կ'աւնու իրականութիւն : Շուտով կ'գայ ի սենեալ, ձայն կ'տայ կնոջը. կ'ակախն պրապել սնտուկի իրե-

րը : Զ'իք մանեակ և ապարանջան ոսկեզնն : Դուռը կ'վազեն աղաղակ կ'բառնան եղելութիւնը պատմելով և մարդկանց օգնութիւն հասնելու կ'փութացնեն : Ի գո՞ւր աշխատութիւն, օձը շատոնց վախաւ իր ծակը, անկարելի է դուրս հանել :

— Մայրի՛կ, ինչո՞ւ համար հայրիկիս հասակը կարձ է . մի օր հարցուց Վահրամ:

— Դիւրի՞ն է ձեզի այդ հասակը հասցունել. գուք ամէնդ անհոգ կ'ըրջիք, մինչդեռ նա ամէն բոսէ կ'մտածէ ձեր ապլուստին վերայ :

— Ուրիշն չ'պիտի փափաքիմ աղոյ ունենալ, զի կ'խորշիմ հայրիկիս հասակն ունենալէն :

— Հայրի՛կ, ի՞նչ է պատճառը, միրգ բերած ժամանակիդ շատը Զարէ հին կ'տաս, ըստ Վահէն քղանցքէն կալուելով :

— Որովհետեւ նա փոքր է, ալէտք է մեծնայ :

— Տե՛ս, հայրիկ, միթէ ես տռաւելութիւն մ'ունիս անկէ, ուները կ'քոտելով, հստակակից եմ անոր, ես աւ պէտք է մեծնամ, ապա թէ ոչ պղտիկ կ'մնամ այսպէս :

կարին

ԲԱԴՐԱՑՈՒՅԻՆ

— ՀՅԵ

ՄՕՐԹԵՐԱՉԻ ՍԱՐԻՆ ԶԵՍՆ ԿՈՅՑԸ

Էջ ի սոտոյցս . . . Զեսն կայտ . . . Ուղեցոյցին անձնութրութիւնը եւ մամացոյցի մը խուզաւութիւնը .

1864 տարւոյ յուլիսի վերջերը . վերին Անկաստինափ (1) մէջ ի Բօնրէչինա

(4) Զուհցերեց Արեգոն նահանդի մէջ հավաքում :

գոնուելով՝ հրաւիրուեցայ երկու բարեկամներէ Մօրքեաչի կատարը այց մ'ընելու . հաճութեամբ ընդունեցի այս հրաւէր . վասն զի կը փափաքէի զննել Ալպեանց հանուր կազմակերպու-

և Վալքրա առաջնորդաց սենեկի պետն : Մեր ուղեգիծն էր բարձրանալ Բօգէկի կողմէն և վերադառնալ Մօրքեաչի սառոյցներէն : Գրեթէ ութ ժամ ուան հաճելի և հանդարտ ընթացք մը



թիւնը , զուիցերիական ո' և է բարձր գագաթնակէտէ մը , նաև ծանօթանալ Քօնրէչինացի ուղեցոյցներու արժանեաց : Մեր այդ ուղեցոյցներէ երկուարմեզ հետ առինք , ամենահռչակն ժէննի

մեզ բաւեց լերան գագաթը հասնիլ : Հոն մնացինք ժամ մը և Ալպեանց ուրիշ գագաթները ըրած ճանապարհորդութիւններէս յ'իս գոյացած նախնի համոզման մը ամրապնդելը զգացի ,

այն է թէ՝ այս սարերը և հովիտները չ'են երկրիս ներքին հրոց գործողութեանց արդիւնքը, ինչպէս կը կարծէ աշխարհագրական ընկերութեան անուանի նախազահը, հասաւ թէ՝ ջուրն և սառուցը յամի և երկարատև գործողութեամբ Ալյանանց ճշմարիս կազմակերպողն եղած են:

Ժէննի մեծդի և ծանրամարմին մարդմ'է, որ կը բարձրանայ բրդացած զառի վերը տեսակ մը դանդաղութեամբ բայց անհման է լեռնային խնդրոց մէջ իւր ձեռնահասութեամբը: Մասնաւրապէս բալորավին սքանչացանք այն եղանակին վրայ, որով նու կարդադրեց մեր իջնալը, մաքրելով ճամբաւն վրային ճարտարութեամբ և քաջասրաւութեամբ այն արդեկը, որոց մարդ կը պատահի ձեռն վերին խառնոց մէջ:

Այսպէս հասանք այն վայրը, ուր կը պարտէննք թողուլ առաւօտեան մեր հետեւած ճամբաւն և անմիջապէս զմեզ անհարթ և լործուն ժայռերու վրայ գտանք: Մեր աջ կազմի, լոյն անցք մը, որ արդէն լի էր ձիւներով, կը կոզմիր մի հակեալ սոսեպտա:

Մեք միմեանց կասպուտծ էինք հետեւեալ կարգաւ, նախ Ժէննի, առա ես, երրորդը իմ բարեկամո Հ... մի յանդուդն լեռնադնակ և անոր ետե իր բարեկամը Հ... և վերջապէս ուղեցոյցն Վալլէր: Հ... քիչ փորձառու էր: Մեք զայն Վալլէրի առաջ դրած էինք, որպէս զի իւր կոզմէ լինելիք ո՛ւ և է սխալ քայլ մը արդիւնքի: Ժայռերու վրայ մի վայրկենական ընթացքէ յետոյ, Ժէննի դարձաւ և ինձ հարցուց թէ՝ պէ՞սք է շարունակել և կամ փորձել մեր աջ կողմի սառուցապատ անցքը:

Ես նախամեծար կ'ընարէի շարունակելը, բայց ուղեցոյցը զիս լաւ չ'հա-

կընալով դարձաւ դէպի ի անցքն: Ես զայն կեցուցի դեռ ևս հոն չ'հասած, ըսելով՝ « Ժէննի, գիտէ՞ք, ուր կ'երթաք, զառի վայրը բոլորովին սառ է»: Նա պատասխանեց. « Գիտեմ, բայց սառոյցը միայն մի քանի մեթու տեղ կ'երեւի: Ես սանդուխ պիտի յարմարցնեմ, այս վանդաւոր մասին վրայ և ապա մեք լաւ նեցուկ պիտի ունենամք ձեան վրայ »:

Նա սանդուխը յարմարցուց, հասաւ ձեան և սկսու իջնալ խիստ զգուշութեամբ: Մեք անոր կը հետեւէինք կարգաւ: Քիչ մը ետքը կանգ տառա և նայելով մեր վերջի երեք ընկերաց անոնց պատուիրեց խնամօք հետեւիլ ստից նշաններուն, աւելցնելով թէ՝ որխալ քայլ մը կրնար անջատել ձիւնակոյա մը: Զազիւ թէ այս բառերը արտասանեց, լսուեցաւ մեր յեանակողմը անկման աղմուկ մը. յետոյ բախում մի և ակընթարթի մը մէջ տեսայ իմ երկու բարեկամաց և իւրեանց ուղորդին գլուրուեցանք գոյթումէ յառաջ երած մը ձեան կոյտի կողին վրայ:

Իսկոյն ես ուժով մը կանդ առի այս յարձակման դիմադրելու, բայց մէկ վայրկենի մէջ ես ևս քշուեցայ այս անդիմադրելի յորձանքէն՝ որ նոյն խոկ Ժէննին ալ ատրաւ, և մեք հինգս միատեղ մի սարտափելի արագութեամբ գլուրուեցանք գոյթումէ յառաջ երած մը ձեան կոյտի կողին վրայ:

Այն վայրկենին երբ ես գլուրուեցայ, գլուխս ծռած գաւազանս շարժուն ձեան մէջ կը մզէի, ջանալով վայն միեւ կարծր սառոյցի մէջ: Այսպէսով կրցայ մի քանի երկվայրկեան հաստատ մնալ, բայց արդեկը մը պատահելով ես խիստ կերպիւ օդոյ մէջ նետուեցայ, մինչդեռ Ժէննի իմ վրայ կը գլուրուէր: Մեք երկուքնիս ալ գաւազան-

նիս կորուսինք։ Այլ չնորհիւ մեր արագութեան անցած էինք լայն բացուածքէ մը։

Պահ մը բոլորովին ընդարմացած էի, բայց իսկոյն կանգնեցայ և տեսայ ընկերներս կիսով չափ ձեան մէջ թաղուած, ոստելով մի կողմէն միւս կողմը այն ճեղքուածքին, որոյ մէջէն կ'անցնէին. յանկարծ զիս անոնց մօտ գտայ, բայց ինքեան գլուրեալ մի երկրորդ ձիւնակոյտի մը յորձանքով։ Ժէննի գիտէր այս խորշի գոյութիւնը և անդընկղմեցաւ ուղղակի։ Այս քաջութեան գործն անպտուղ պիտի ըլլար։ Ուղղորդն կը մտածէր թէ՛ խորշին մէջ ցատկելով պիտի կրնար չուանին հարկելուծ ձկտումը տալ զմեզ ամենքս ալ կեցնելու համար, բայց նա խորչէն դուրս նետուեցաւ ուժգնակի, մինչդեռ չուանը զայն կը սղմէր խեղդելու սատիճան։

Այժմ մեր ներքեւ կը գտնուէր երկար զառիվայր մը, որ կը տանէր դէպի ի բարձրաւանդակ մի, յորմէ կ'իշնային սաւի կտորներ բրտացած անջատեալ այն խորունկ խորշէն դէպի ի ուր մեք կը քշուէինք արագութեամբ։

Ձիւնակոյտին ճակատը կը գլուրուէին իմ երկու բարեկամներս և նոցա առաջնորդը գրեթէ ձեան մէջ թաթախեալ։ Ժէննի ուղղուելով ամեն վայրկեան կը չանար ճարահատեալ ոտքը սառոյցի մէջ զետեղել։

Այս անկման ատեն միայն հետեւեալ խօսքը կը լւէի, « կա՛ց, Տէր Յիսուս, կա՛ց »։ Այն տեսակ մը սեղմեալ միտք, զոր մարդիկ կը նկարագրեն, երբ միանդամ խեղդուելու վրայ են, զայս կ'զգայի նոյն պահուն։ Մեր ճիգը խիստ յանկարծական եղած էր և գրգռութիւնը խիստ սաստիկ սարսափի տեղի

տալու համար։ Հստ որում զառի վայրը նուազ կարծր էր՝ մեր քշուելու արագութիւնը զգալապէս դանդաղած էր, այնպէս որ կը կարծէինք թէ՛ պիտի կենանք։

Բայց ձիւնակոյտը անցնելով վերը յիշուած բարձրաւանդակը, իւր նախորդ արագութիւնն ստացաւ։ Այն տեն Հ . . . իր բազկաւ շրջապատեց բարեկամը, որպէս թէ՛ ամեն յոյս կորած էր։ Իսկ ես ձկտեցի իմ կասա և պահ մը չանացի զիս քակելու համար։ Զը կրնալով յաջողիկ, կամիոփէի իմ բոլոր ոյժս չուանի վրայ շարժման յամրացման օգնելու համար։ Յաջողման համար իմ մասնակցութիւնս կը կասկածիմ թէ՛ անօգուտ եղաւ։ Բայց Ժէննիի զգալի եղաւ քաշելու համար ըրած ճիգը։ զառի վայրին մի թեթև փոփոխութիւնը յօգուտ իւր գործածելով՝ յաջողեցաւ մեր բոլորը կեցնել բացուածներէ մի քիչ հեռուն։

Մենէ և ոչ մին ծանրապէս վիրաւորուած էր, չուանի ճնշումը կը թողուր սեւ շերտեր իմ թեւերաւո վրայ և մեք ամենքս ալ կ'զգայինք ձեռաց շփում մը, որ մի քանի օր տեեց։ Ես ժամացյցիս շղթային մի ծայրն վիզս կախուած գուայ, միւս ծայրը գրալնս, իսկ ժամացյցն անյայտացած էր։

Այս դէպին տեղի կ'ունենար Յուլիսի 30 ին։ Երկու օր վերջ յիսալիա իջայ, ուր միացի 10-12 օր։ Օգոստոս 16ին վերադարձյ ի Յօնիրէչինա և կը փորձէի մի արշաւանք մի եւս՝ ի խնդիր կորուսած առարկույիս։ Ինձ պէս, իմ երկու առաջնորդք ալ կը կարծէին թէ՛ ցարդ ճիւնը ժամացյցի վրայէն հալած ըլլալու էր։ Արեւուն ճառագայթից ուկւոյ վրայ շատ քիչ ազդեցութիւն ունենալուն պատճառաւ, կը հետեւցնէի

թէ՝ անկմանէ յետոյ եթէ պահարանը բաց գտնուած էր, ժամացոյցն ալ գետին մնացած ըլլալու էր:

Ես ընկերացայ Մօրքրաչի սառնակոյտերու վերն հինգ բարեկամաց, որոց արժանիքն չ'եմ կարող ըստ արժանւոյն գովել, ի մէջ այլոց, մին նոցանէ անդամ Աւազածողովոյ՝ ցցուց հակառակ իւր վաթտուն և չորս տարիներու այնպիսի քաջասրտութիւն և զարմանալի պաղարիւնութիւն մը ամենէն դժուարին անցից մէջ:

Իմ ընկերներէս միայն երկուքը պատահարին վայրը եկան ինձ հետ, բայց ոչ ոք ի մէնջ կրցաւ երթալ այն սասի մասանց վրայ, ուստի ձիւնակոյտը յառաջ եկած էր: Հաս որում մեք կը կոխէինք այն նոյն ճիւնակոյտի մնացորդներու վրայ մի քանի թօնո ծանրութեամբ ժայռ մը զառուեցաւ արեւու ազդեցութենէն մենէ վեր գտնուող ձեան դեղէ մը և գլուխուեցաւ այն ձամբուն երկայնութեամբը զոր մեք հետևած էինք սահելով: Չուանի գըտնուած մի քանի կտորներ մեզ սապահովեցին թէ՝ խսկալէս մեք ձիւնակոյտի ձամբուն վրայ կը գտնուէինք և խորդարկութիւնք սկսու:

Հազիւ մի քանի վայրիկեան տեսած էր, երբ որ Կրէնտէնվայրի ու վեցոյց Քրիստիան Միքէլի մի հուրրան մեզ խմացուց թէ՝ ժամացոյցը գտնուած էր: Մեք զոյն չոր և կատարեալ անտիւեղծ վիճակի մէջ գտանք, նա ի բաց մնացած էր ինչպէս մեք հաշուած էինք:

Որովհետեւ զայն ականջիս մօտ կը շորժէի հազիւ յուսալով թէ՝ նու ինձ պիտի սպասախանէր՝ վարքիկ էակը իսկոյն կենաց նշան տուաւ: Նա բնակած էր տասն և ութ օր ձեան մէջ: Բանալուց շրջան մը բաւեց շուտով նորա շարժում տալու և յայնմ հետէ նա կը քալէ մի անփոփոխ ճշլութեամբ:

Ֆ. Թէնաւ

Հ. ԶՆՈԶԵՍՆ

ՀԱՅՐ ԿԲԿ

Խուլ - համբերու դասիարակն

Ո՞րքան անողորմ է այն հիւանդութիւնն որ լելեաց զգայարանքէն և խօսելու կարողութիւնէն կը զրկէ խեղճ փոքրիկ մանուկներն:

Այն թանկագին կարողութիւնն որով մարդիկ եղբայրաբար կը հազորդակցին, ընկերակցութիւններ կը հիմնեն, կը փոխանցեն՝ սերունդէ ի սերունդ իմացականութեան հարստութիւններն, այն կարողութիւնն, կըսենք, խօսիլի է: Նա որ չը կարէ երբէ՛ք խօսիլ, մարդկային ընկերութենէն հրաժարազեալ էակ մը կը նկատուի: Երանի այն մարդուն որ կուտայ այդպիսեաց խօսելու կարողութիւն և զանոնք կը կոչէ ընկերային կենաց մէջ և կը մացնէ իրենց ընտանեկան յարկին մէջ:

Բաղդին անարդարութիւններն ջնջելու, բնութեան մխաններն ուղղելու մեծ խորհուրդն արդի ժամանակաց միայն կը պատկանի:

Խուլ համրերը խօսեցնելն հրաշք մը նկատուած էր նախնի խմասոնց համար որք զայն չէին համարձակած վերաբել մարդկային կարողութեան: Եւ սակայն մարդոց խոնարհագոյնն կարող եղած է այդ վեհ և անիմանալի հրաշքը գործել:

Էրէ քահանայն եղած է Խուլ-Համբերու գաստիարակն, հայրն, փրկիչն. 1872 ին Վէրսայի մէջ ծնած է. մանկութիւնը Քաթոռ. Նասիօններու վարժարանին մէջ անցուցած է: Կրօնից վրայ անհուն սէր մ'ունենալով՝ ուսումնասիրեց աստուածարանուկան ուսումնապոսին, Պատինէ որբազանին,

ձեռամբ քահանայ եղաւ և իւր պաշտպանին մահուանէն վերջ, Փարիզ վերադարձաւ պաշտօնին գլուխն անցնելու համար :

Հայր կրէ երեսուն երկու տարեկան էր երբ դիմուածաւ օր մը Թօնէ Ս.



ՀԱՅՐ ԷՐԵՒ Ա. Բ. ՋԱՆԻ

Վիքթորի փողոցը տուն մ' այցելեց, Տիրուհին գուրս ելած էր, տուածնորդեցին զինք համեստ սենեակ մը տիրուհւոյն սպասելու համար: Սենեկին մէջ երկու փոքրիկ աղջիկներ նստած սեղանի մ' առջեւ կար կը կարէին: Քահանայն համական համական շեշտերով հար-

ցումներ ուղղեց այդ սիրասուն երկու էակաց, բայց մեծ զարմանօք տեսաւ օր իւր հարցմունք անպատճախան կը մնային: Աղջիկներէն մին վերջապէս հասկցուց ձեռաց նշաններով թէ՝ չը կրնար խօսիլ և լսել իւր ընկերուհւոյն նման:

Այդ վայրկենէն հետէ քահանայն համակրութիւն մը ցցուց որբ աղջկանց



Խոր Համեսերու այբենարան:

Վրայ և այդ գեղեցիկ ասիթէն ուղեց օգուտ քաղել իւր գիթութեան սպին երեան հանելու համար: Այն օրէն իվեր ուխտ ըլսու իւր կեանքը Խուլ Համբերու գաստիարակութեան նուիրել: Ի՞նչպէս հարցուց ինքնին, նորածին մանուկը կը ճանաչէ իրերն և մորդիկ: Զէ՞ մի որ նա եւս Խուլ Համբի է աշխարհ եկած ժամանակ: Ի՞նչ միջոց ներով կը յաջողի ամէն ինչ հասկնալ.

Յիշողութեամբ : Տեսանելեաց և լսել-
եաց զգայարանքներովն իրաց վրաց տե-
ղեկութիւններ կը քաղէ : Ուրեմն աչքը
կը բաւէ նշաններով խօսելու համար :
Խուլ Համրերը աչօք պիտի լսեն և մատ-
ներով պիտի խօսին տեսանելի խօսելու
մը պիտի հասկցնեն իրենց կարծիքներն :

Քահանայն իւր նալսատակին հասնելու
համար ծանօթացաւ ձեռաց այբբենա-
րանի մը որ երկար ժամանակէ ի վեր
կը գործածուէր Սպանիոյ մէջ : Անձ-
նուէր քահանայն, մարդկութեան բա-
րեկամն, ունենալով ի ձեռին այդ հը-
րաշագեղ գիտութեան բանալին, քանի
մը Խուլ Համրեր հաւաքեց և Մուլէն
փողոցին մէջ առաջին վարժարանը հիմ-
նեց որոյ աշակերտաց թիւը 1760ին
մինչև 72 ի կը հասնէր : Հակառակ այս
դժուարութեանց զորս կը յարուցանէր
այս վեհ գործն, և հակառակ ստակի
նուազութեան, քահանայն շարունա-
կեց հետևիլ իւր գծած ճանապարհին
ուղղութեան : Կ'արհամարհէր ամէն
խոչընդուն և յառաջ կը վարէր իւր
յանդուգն ձեւնարկի :

1785 ին պետական հրաման մը կը
յայտարէր թէ՝ Խուլ Համրերու այդ
վարժարանը ցմիշտ կանգուն պիտի
մնայ և կատավարութիւնը կը յատկա-
ցընէ այդ բարենաբառակ հաստատու-
թեան տարեկան 3400 ոսկեայ գումար
մը : Քահանայն համբաւը տիեզերա-
կան եղաւ . Աւստրիոյ ժօղէ ֆ. կայսրն
և Ռուսոյ կատարինէ Բ. կայսրուհին,
և այլ ականաւոր անձինք իրենց զո-
նազան նուէրներովն վարժարաբեցին
զնա : Ինք կը սիրէր առվատաներն և այդ
մեծարանաց կը պատասխանէր : « Աղ-
քատաց նուիրած եմ իմ անձս, առանց
աղքատաց չպիտի կրնայի Խուլ Համրե-
րու գատարակալութեան համար աշխա-

տիլ : »

Բարեպաշտ քահանայն մեռաւ 1789
ին, գեկտ 23ին, վատահ թէ իւր հիմ-
նած վարժարանին ապագայն ապահով-
եալ էր : Իւր կենաց վերջին վայրիեան-
ներուն մէջ բարեկամներ և աղքական-
ներ զինք չըլապատած էին երբ յա-
նուն Ազգային ժողովոյ պատգամաւո-
րաց խումբ մ'եկաւ և բարերարին ան-
կողնոյն մօտենալով ըստ նմա : « Հան-
գիտ մեռէ՞ք . հայրենիքը կ'որդեգրէ
ձեր աշակերտաներն : »

Եւ այսօր, չնորհիւ այդ եղական գե-
ղեցիկ գատարակութեան, Խուլ-
համրերուն մէջ կը գտնուին գատարա-
կաներ, գրագէտներ, փորագրիչներ,
նկարիչներ և արձանագործներ :

1879 տարւոյ մայիս տարւոյն մէջ վար-
ժարանին ընդարձակ սրահին մէջ գե-
ղեցիկ արձան մը կանգնուեցաւ ի յի-
շատակ մեծ բարերարին : Արձանն որոյ
պատկերը թերթերնուս մէջ դրած-
ենք, կը ներկայացնէ Հայր էրէ իւր
աշակերտաց միոյն հետ որուն կարդալ
կուսուցանէ : Վարժարանին նախկին
սաներէն միոյն գործն է այս գեղեցիկ
արձանն :

Մ. Գ. ՄՕԶԵԱՆ



Նա որ յաճախ մեր քմաց ու կամաց
համելի է՝ մեծառիկ վնաս է առողջու-
թեան :

Նա որ կը սիրէ ձուն պէտք է հաւե-
րու շուտկի լոէ ընդմիշտ :

Պարտքն հասուցանել ուղող մարդն
ժողուցած դրաւին գնոյն բարձրու-
թեան չնայիր :

Պ. Ա. Ռ.



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԻՒՍԽԱՑԻՆ ԲԵՒԵԲ

ԵՐԿԻՐ ՓՐԱՆՍՈՒՄ ԺՈՅԵՖԻ

ԵՒ

ԾՈՎ ՆՈՐ-ԶԵՄՊԼԱՒ

ԳԼՈՒԽ Ը.

Ի Հիւսիւսային ծայրն . — Միտելորժ
սառնամանին . — Արկած . — Ֆղիկըլի
հրուանդանն . — Վերադարձ ի ճառ . —

Արջի որսորդորիւն :

(Նար . 24րդ թիւէն)

Ճանապարհը կարծես աւելի կը
դժուարանար իրենց վերադարձին և
երկար ժամանակէ մը վերջ յաջողեցան
Պոօսօք հրուանդանէն մինչեւ Շըռօյ-
թըրի հրուանդանը հատնիլ : Վերջապէս
եկան, Հալէր և իւր ընկերները ող-
բալի վիճակի մէջ գտան : Գրեթէ ան-
ճանաչելի եղած էին :

Ապրիլ 14 ին, Հոհէնլոհէ կղզին թո-
ղուցին . տասն աւուր համար պաշար
մնացած էր : 15 ին Հէլվալս հրուան-
դանէն վեր մնացած բոլոր կղզիներէն
անցած էին և գիշերը կանգ կ'առնուին
81⁰ աստիճանին վրայ :

18ին, Նէօշթատի կղզեակը կը հաս-
նէին . Օռէլի հետ ընկերակցութեամբ
Բաեէու տեղակալն թխովի հրուանդանը
ելաւ, որոյ բարձրութիւնն էր 900 մե-
թըր : Այդ բարձրութենէն կը նշա-
րէին վիլգէքի կղզւոյն սաւանային մի-
այնութիւնն, Լինտմէն խորչէն կադ-
մուած թերակղզի մը զոր Բաեէու կո-
չեց Լա Խօնսիէռ լը նուռի, ի պատիւ
Փարիզու աշխարհագրական ընկերու-
թեան նախագահին, և Նէօշթատ կղզ-
ւոյն հիւսիսակողմն գտան Քօլինսընի
գեղջկական խորչն իւր օձածե նեղուց-

ներովն : Այս խորչն ծածկուած էր բոյ-
սերով և ծովային դալարեօք : Զերմա-
շափը զեռոյին վար 25⁰ կը ցուցնէր :
Բեւեռային գեղջցիկ սլատկերներէն
մին էր զոր տեսան :

Երկար արշաւանքներէն վերջ, դըժ-
ուարին արկածներէ յետոյ, կը մնար
90 քիլոմէթրօյի ճանապարհ մը թէ կէ-
թօֆի հասնելու համար : Բաեէու յու-
սահատ մնացած էր . Ամէն կողմանէ
սառոյցները զինքը պաշարած էին : Ո՞ր
կողմը յառաջանալ հարկ էր : Աջ թէ
ձախ կողմերն : Պէտք էր անցնիլ Վիլ-
գէք երկրին սառոյցներէն որք ձախա-
կողմը կը գտնուէին :

ԳԼՈՒԽ Թ .

Երրորդ արշաւանի սայլակով . — Մայ-
Քինքօֆ կղզին . — Պոիւն հրուանդանն .
— Զիշիի երկիրն . — Թրանտւա ժօղկի
երկրին ենարաւանն :

Ապրիլ ամսոյն վերջին օրերը, մթնո-
լութը խաղաղ և պայծառ էր : Բայց
ցուրաը որ 18⁰ և 25⁰ աստիճանաց վը-
րայ էր, գեռ կարծր կը պահէր սա-
ռոյցներն և հազիւ պիտի կրնայինք
սայլակով երրորդ արշաւանք մը կա-
տարել : Մեր եղանակով արշաւանաց նը-
պատակն էր մասսմբ խուզարկել ֆը-
րանսուա երկրին արևմտեան կողմերն,
համոզուելու համար թէ՝ Սրիցաէրկի
կողմերը կը յառաջանա՞ր այդ անձա-
նօթ երկիրն :

Ապրիլ 29ին, Բաեէու, Պրօչ տեղա-
կալն և Հալէր գուրս ելան նաւէն,
Ժիւպինալ և Թօուսսի շուներուն հետ,
սայլակն բեռնաւորուած էր շաբաթ-
ուան մը պաշարով : Բէքէլ շնիկն զոր
նաւուն մէջ թողած էին, եկաւ արշա-
ւասոյր գտնել կարտւանը և ընկերա-
ցաւ նմա իւր յօժար կամօքն :

Առաջին դադարը տեղի ունեցաւ Վիլզք կզգոյն մէջ։ Մաք Քէնթօք կզգին որոյ կողմը կը յառաջանային, կը ներկայացնէր սառույցներու կամար մը ձախակողմէն դէպ յառաջակողմն, Պըրիւն հրուանդանէն ակսեալ մինչեւ Օբոլըրի հրուանդանն։

Սայլակը թեթեցուցած էին. շատ պաշարներ ձգած էին։ Մինչ շտեմարանը կը հաստատէին իրենց պաշարները տեղաւորելու համար, և ահա՝ արջ մը խոչոր ճեղքէ մը դուրս սլացաւ և երկրախոյզներուն վերայ յարձակեցաւ։ Միքանի հարուածներ հրացանի յաջողեցան զնա փախցնել. վիրաւորուած էր բայց վէրքերէն և ոչ մին մահացու էր, որովհետեւ սկսաւ խոյս տալ և ապաւէն փնտուել։

Մաք Քէնթօք կզգին հանելու համար, ճեղքերով պաշարուած բարեի մը մէջն պէտք էր անցնիլ որ հաւանականաբար կը հաղորդակցէր հարաւակողմէն՝ Յ քիլօմէթր ընդարձակ ջրալից աւազանի մը հետ։ Ճանապարհորդներն որոշեցին այդ վտանգաւոր ճեռնարկութիւնը ստանձնել։

Մայիս Այն, Մաք Քէնթօք կզգոյն եզերաց վրայ կարավանը հաստատուեցաւ որոյ վրայ որոշեցին ելնել Բաեէու և Հալլէու հետեւեալ օրն։

Երկու ժամ վտանգալի արշաւանքէ մը վերջ, կարողացան անցնիլ Միմօնիի սառնակոյտէն և երեք ու կէս ժամէն հասնիլ հրուանդանին գագաթն։ 760 մէթր բարձրութեան մը վրայ կը գրանուէին։

Մարքամի նեղուցին միւս կողմը, կ'երկարէր կոնաձեւ լերանց չվթայ մը որոց միջեւ կը բարձրանար սպիտակ եւ և նուրբ բուրդ մը 1500 մէթր բարձրութեամբ զոր Բաեէու կոչեց Ռիխթօ-

ֆէնի ասեղն։ Կարելի եղածին չափ, երկիրը կը ներկայանար խորշերով եւ սառույցներով ծածկուած։ անկարելի էր որոշել Սրիցագէրկի եզնրաց սահմաններն։ 110—115 մէթր ընթարձակութեան մը վրայ կը նշարուէին լեռնագոտիներ և հաւանակամնաբար ցամաքային մասը դէպ յայդ կողմեր կ'երկարի արեւելեան երկայնութեան կ⁴⁸⁰ աստիճանն։ Մառքամի նեղուցին հարաւակողմը ցամաքները կարուած էին նեղուցով մը որ կոչուեցաւ Նեկրի նեղուց։ Այս նեղուցը նաւարկելի էր, և սառոյցին վրայ հետից նշաններ որոշակի կը տեսնուէր։

Իւր գիւտերը ամրողջացնելու համար Բաեէու մոտագիր էր հիւսիսային արեւելակողմը յառաջանալ նաւակով մը եւ Ռիխթօֆընի բրգամեւ լեռնէն անցնիլ Զիխիի երկիրը մոռնելու համար։ Բայց ասան եւ հինգ օր կը մնար իրեն եւրոպա վերադառնալու համար, եւ դէպ ի Թէկիքօֆ սառոյցներուն ճամրան բռնեց։ 22 ժամ քալելէ յետոյ հասաւ անդ։

Իւր խուզարկութեան ճանապարհորդութիւնն վերջացած էին։ Իւր սայլակով կատարած երեք արշաւանաց մէջ 725 քիլօմէթր ճանապարհ կատարած էր։

Աւասիկ ի'նչ եղանակաւ Բաեէու հրամանատորն կը նկարագրէ նոր բեւեռային երկիրն։

« Ֆրանսուա-Փոզէֆի երկիրն իւր ապահութեամբ կը նմանի Սրիցագէրկի մեծութեան և կը բաղկանայ բազմաթիւ լեռնակոչուերէ։ Իւր արեւելեան և արևմուեան կողմի գլխաւոր երկիրներն են Վիլզք և Զիչի, երկայն խորշերով և կզգեակներով ծածկուած։ Ընդարձակ նեղուց մը, Աւստրիա ունատ, զա-

նոնք իրարմէ կը բաժնէ ՖրանքՓօրթհրուանդանէն սկսեալ:

Եւ որովհետեւ առիթ ունեցայ շրջելու բեւեռային Ասուցեալ Ովկիանոսէն թրջուած բոլոր երկիրները, կարելի է ինձ այժմ բազգատել զայնս: Արևմտեան կրօէնլանտիա ամենէն բարձրն է և սառնային. Հակադիր եղրն լեռնային է ճոխ և արգաւանդ իւր բուականութեամբ:


« Ինչ որ մինչեւ հիմա բացարձակ անծանօթ կը մնայ, այդ երկրին ներքին մասն է: Սրիցաէրկ և Նոր Զէմպիա ծովին 3000 մէթր բարձր են: Եւ սակայն ոչ Սրիցաէրկ ո՛չ Սրշիսէլագոսն և ո՛չ Նոր Զէմպիա Ֆրանսուա Ժօգէփի նման չոր և ամայի են:

« Ֆրանսուա Ժօգէփի երկրին տեսարանը բոլորովին բեւեռային է. անոր ցուրտ կիմայն, հոկայական սառնակոյտերն, և ամայի տեսքն մտուր տըպաւորութեան մը ներքեւ կը թողուն ճանապարհորդն: Իւր երկրաբանական կազմութեամբ, կը նմանի արևելեան կրօէնլանտի զանագան մասսանց. բազգատմանը այլ բեւեռային երկրաց հետ, հոս բուսական կետնքը աղքատ է: Ո՛չ իսկ կը տեսնես հետքն այն բոյսերուն՝ որք տարւոյն մէջ երեքմի կ'երեկին բեւեռներու յատուկ ցուրտ կիմայից ներքեւ:

Թարգմ.

Մ. Գ. ՄՕԶԵԼԻՆ

[Հարունոկէլի]



Հանդիսիս 22րդ թիւն հրատարակելոյ առթիւ, կ'ազաշնք մեր Մեծ.

Գործակալաց և մինչեւ ցայսօր բաժնեգինները շվճարող Բաժանորդաց, որ բարեհածին բաժնեգինները յղել մեզ: Արդարեւ, սոյն ազգաբարութիւն՝ որ մի' միայն մեր ազգային լրագրաց էջերուն մէջ կ'երկի, և թէ միայն Հայ թերթերուն վերապահեալ է, ակներև կ'ապացուցան թէ՝ Հայ ընթերցողք ինչպէս կը քաջալերեն իւրեանց թերթերն ու անոնց հրատարակչները:

• Ծ Ա Ղ Ի Կ Մ Ա Ն Կ Ա Ն Ց

Կը հրատարակուի տեսր առ տեսր 16 երեսէ բազգացեալ 15 օրը միանգամ Տարեկան գինն է կանիսի 30 դշ. արծ. մէջիտ Պօլսոյ համար: Գաւառաց համար 40 դահնեկան: 4 բուրբի Ռուսաստանի համար: — Մէն մի տեսրակին գինն է 50 ֆարայ:

Տաժանորդագրութեան տեղերն են: Կ. Պօլսի Էսկի Զապթիէ ճատատէսի: Թիւ 61. Հանդիսիս խմագրատառնը: — Կամուրջն գլուխ՝ ջրավաճառ Պօլս և Յակր աղայից խանութները:

Ադրիանուպոլիս: — Ալտամ էֆ. Սլվաճեան. Ատան: — Պետրոս էֆ. Ուրֆալեան. Գահիրէ: — Յառաջդիմասէր ընկերութիւն. Երզնկա: — Դրիգոր էֆ. Տէր Գաբրիէլեան. Եօզիոթ: — Միհրան էֆ. Քիւրբենեան. Զմիւռնիս: — Ուսումնակիրաց ընկերութիւն: Թիփին: — Մեծ. Խոկր էֆ. Համամելեան. Մէրսին: — Գրիգոր էֆ. Արփիսի Արփիսիան. Մանիսա: — Մասնածիւղ Ուսումնակիրաց ընկ.

Մարտուն: — Յ. Թ. էֆ. Գայական. Նիկոմիդիա: — Յակոր էֆ. Տէր Ազարեան. Ուսուոթայ: — Ռուբէն էֆ. Գոլանճեան.

Մաման: — Միհրան էֆ. Քիւրբենեան. Մերսամիս: — Միհրան էֆ. Թայշեան. Սրմին: — Սրմին էֆ. Համամելեան. Մէրսին: — Գրիգոր էֆ. Արփիսի Արփիսիան.

Մանիսա: — Մասնածիւղ Ուսումնակիրաց ընկ. Մարտուն: — Յ. Թ. էֆ. Գայական.

Նիկոմիդիա: — Յակոր էֆ. Տէր Ազարեան. Ուսուոթայ: — Ռուբէն էֆ. Գոլանճեան.

Մաման: — Միհրան էֆ. Քիւրբենեան. Մերսամիս: — Միհրան էֆ. Թայշեան. Սրմին: — Սրմին էֆ. Համամելեան. Մէրսին: — Գրիգոր էֆ. Արփիսի Արփիսիան.

Մանիսա: — Մասնածիւղ Ուսումնակիրաց ընկ. Մարտուն: — Յ. Թ. էֆ. Գայական.

Նիկոմիդիա: — Յակոր էֆ. Տէր Ազարեան. Ուսուոթայ: — Ռուբէն էֆ. Գոլանճեան.

Մաման: — Միհրան էֆ. Քիւրբենեան. Մերսամիս: — Սրմին էֆ. Համամելեան. Մէրսին: — Գրիգոր էֆ. Արփիսի Արփիսիան.